Հայաստանի Հանրապետություն
Երևանի քաղաքապետարանի
«№20 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ
բաժնետիրական ընկերություն:

Республика Армения
Ереванская городская мэрия
"Поликлиника № 20"
Акционерное общество
закрытого типа.

375099 ք. Երևան, Դավիթաշեն 4 թաղ.
հեռ. 36-82-41
Կոդ-01201955

375099 Ереван, Давидашен 4 кв.
тел. 36-82-41
Код-01201955

№ 16/05, 20.05.2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15»ծածկագրով
ընթացակարգի հրավերի

<<*Թիվ 20պոլիկլինիկա*>> *ՓԲԸ*-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման նպատակով կազմակերպել է <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Դավիթաշեն 4-րդ թաղ.

հասցեով,

փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող << 7 >> -րդ աշխատանքային օրվա ժամը << *12:00* >>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ <<*01. Հունիսի 2015թ.*>> ժամը <<*12:00*>>-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել

գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով իրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

*<<Թիվ 20 պոլիկլինիկա>> ՓԲԸ*

*էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<pol20.gnumner@mail.ru>>,*

*հեռախոսահամարն է՝ <<010-36-58-73>>:*

*<<Թիվ 20 պոլիկլինիկա>> ՓԲԸ*

տնօրեն՝ Է. Բարսեղյան